ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14 հուլիսի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Նաիրա Ղազարյանի ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի անցկացմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, Նաիրա Ղազարյանին դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի հաղթող ճանաչելու, Նաիրա Ղազարյանին օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը՝ որոշումը՝ դպրոցի տնօրեն նշանակելու մասին, տրամադրելուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը պարտավորեցնելու պահանջների մասին, թիվ ՎԴ/3413/05/22 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունիսի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Նաիրա Ղազարյանը 2022 թվականի մայիսի 31-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Վարչական դատարան)՝ ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, որով պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի անցկացմանն ուղղված գործողությունները, Նաիրա Ղազարյանին ճանաչել դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի հաղթող և պարտավորեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը՝ որոշումը՝ Նաիրա Ղազարյանին դպրոցի տնօրեն նշանակելու մասին:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Գ.Սոսյան) 2022 թվականի հունիսի 08-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է, որ պետական կազմակերպություններում ծագած աշխատանքային վեճերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգմամբ ՀՀ վարչական դատարանի ընդդատության մեջ չեն մտնում, քանի որ վերը նշված նորմով ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են միայն հանրային ծառայության հետ կապված վեճերը, իսկ պետական կազմակերպությունում աշխատանքը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով որպես այդպիսին չի հանդիսանում:*

Այսպիսով՝ Դատարանը, (…) հաստատված է համարում, որ Նաիրա Ղազարյանի հայցադիմումով ներկայացված պահանջներն ընդդատյա չեն ՀՀ վարչական դատարանին, քանի որ հայցվորի և պատասխանողների միջև վեճը ծագել է ոչ թե պատասխանողների՝ որպես վարչական մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ այն զուտ միայն վերաբերում է գործատուի և աշխատողի (կամ աշխատանքի հավակնող անձի) միջև ծագած մասնավոր աշխատանքային հարաբերություններին, այսինքն՝ հայցի հիմքը ոչ թե վարչարարությունն է, այլ մասնավոր աշխատանքային իրավահարաբերություններն

են, որոնց հետ կապված բոլոր վեճերը լուծվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Ընդ որում, Դատարանն ընդգծում է, որ թեև հայցվորը որպես պատասխանողներ է նշել վարչական մարմիններին, այն է՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, սակայն այդ հանգամանքը ևս որևէ կերպ չի փոխում իրավահարաբերության բնույթը, քանի որ հայցվորի կողմից վիճարկվող գործողությունների և ակնկալվող արդյունքի՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու մրցույթի հաղթող ճանաչելու գործընթացը վարչարարություն չհանդիսանալու պայմաններում սույն վեճը, միևնույն է, չունի վարչաիրավական բնույթ»:

3. Թիվ ՎԴ/3413/05/22 գործը 2022 թվականի հունիսի 22-ին մակագրվել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ.Մինասյանին:

4. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Մինասյան) 2022 թվականի հունիսի 29-ի որոշմամբ, գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունները. *«(...) ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտնում է, որ թիվ ՎԴ/3413/05/22 գործի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով սույն դատարանում իրականացնել հնարավոր չէ, քանի որ տվյալ պարագայում վիճելի իրավահարաբերության բովանդակությունը կազմում է պատասխանողների՝ իրենց հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, հետևաբար՝ իրավահարաբերությունը կրում է հանրային բնույթ:*

Նման եզրահանգման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցի առարկան է հանդիսանում պատասխանողների կողմից որոշակի գործողությունների կատարումը, անգործության ոչ իրավաչափ ճանաչումը, այսինքն՝ ներկայացված հայցը վերաբերում է պատասխանողների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կազմակերպության տնօրենի պաշտոնի նշանակմանն ուղղված պատշաճ գործողությունների կատարմանն ու ապահովմանը, այն է՝ վարչարարության իրականացմանը:

Այսպիսով հարկ է արձանագրել, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը բովանդակային առումով ուղղված է եղել պատասխանողների կողմից վարչարարության իրականացմանը, հետևաբար և պատասխանողների՝ իրենց հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականության իրականացմանը, այսինքն՝ հայցվորը որպես դատական պաշտպանության եղանակ ակնկալում է արդյունավետ միջոցների կիրառում վարչական դատավարության կարգով»:

5. Թիվ ՎԴ/3413/05/22 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հուլիսի 7-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

6. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակման հետ կապված իրավական վեճը բխում է հանրայի՞ն, թե մասնավոր իրավահարաբերությունից:*

7. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (…)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝*

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը. (…)»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

10. Սույն որոշման 7-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

11. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ*

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ[1]*:*

12. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի իրավական կարգավիճակը սահմանող օրենսդրական նորմերը:

13. Այսպես՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«Սույն օրենքը սահմանում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ պետական կազմակերպություն) իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգը, ինչպես նաև պետական կազմակերպության փոխհարաբերությունները պետական մարմինների հետ»:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով»:*

Նշված օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն)»:*

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ»:*

14. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը:

4. Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

5. Հանրային ծառայության պաշտոնն արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն, քաղաքական զսպվածություն և մասնագիտական գործունեություն պահանջող հատուկ միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով:

6. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող (…)»:

15. Սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ինչպես նաև ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Ընդ որում՝ անձի զբաղեցրած պաշտոնը համարվում է հանրային ծառայության պաշտոն այն դեպքում, երբ այն

ընդգրկվում է պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների ցանկում:

Պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմինն է, որն իրականացնում է պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը և, որպես կանոն, նշանակվում և ազատվում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմնի կողմից: Պետական ոչ առևտրային կազմակերպության, տվյալ պարագայում՝ «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնն ընդգրկված չէ պետական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում[2]: Տվյալ պաշտոնը միաժամանակ չի հանդիսանում նաև պետական պաշտոն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-8-րդ հոդվածների իրավակարգավորումների համատեքստում:

Այսինքն՝ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը չի համարվում հանրային պաշտոն զբաղեցրած անձ կամ հանրային ծառայող, քանի որ վերջինիս զբաղեցրած պաշտոնն ընդգրկված չէ հանրային ծառայության, մասնավորապես՝ պետական ու համայնքային ծառայության, ինչպես նաև հանրային պաշտոնների ցանկում:

Վերոգրյալից հետևում է, որ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակման հետ կապված հարաբերությունները կրում են զուտ աշխատանքային բնույթ և չեն հանդիսանում հանրային ծառայության անցնելու հետ կապված հարաբերություններ: Ըստ այդմ՝ վարչական մարմինների՝ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելուն ուղղված գործողությունների հետևանքով վերջիններիս և տվյալ պաշտոնը զբաղեցնելու հավակնություն ունեցող անձի միջև ծագող հարաբերությունը դուրս է վարչական մարմինների՝ գործադիր-կարգադրիչ գործառույթների շրջանակից և կրում է մասնավոր բնույթ:

16. Այսպիսով՝ սույն գործով Նաիրա Ղազարյանի և ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

---

[2] Տե՛ս, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի հաստիքացուցակը, ինչպես նաև՝ ՀՀ փոխվարչապետի, ՀՀ տարածքային կառավարման նախարարի՝ 2008 թվականի դեկտեմբերի 04-ի «Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանը:

միջև ծագած վեճը վերաբերում է Նաիրա Ղազարյանի՝ «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի անցկացմանն ուղղված գործողությունների իրավաչափությանը և դրանց արդյունքում իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնմանը, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Նաիրա Ղազարյանի և ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև ծագած իրավական վեճը բխում է մասնավոր իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/3413/05/22 գործը ենթակա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/3413/05/22 գործն ըստ հայցի Նաիրա Ղազարյանի ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ «Ապարանի Հ.Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի անցկացմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, Նաիրա Ղազարյանին դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթի հաղթող ճանաչելու, Նաիրա Ղազարյանին օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը՝ որոշումը՝ դպրոցի տնօրեն նշանակելու մասին, տրամադրելուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ